



**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆԱԶԱԾՆԱԺՈՂԱՎ**

ԾՐԱԳԻՐ

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆԱԶԱԾՆԱԺՈՂԱՎԻ
2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ 2009

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
1. Կարգավորման օրենսդրական դաշտի կադրերելագործում	4
2. Սակագնային քաղաքականություն	10
3. Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության մոնիթորինգ	17
4. Ներդրումային ծրագրեր և սպառողների սպասարկման որակի ցուցանիշներ	19
5. Սպառողների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքներ	22
6. Նամագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ	24
7. Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում	24

Նախաբան

Նայաստանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Նանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արարտորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Նայաստանի Նանրապետության օրենքներով և Նայաստանի Նանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Նանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն՝
 - սակագնային բաժին,
 - ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝
 - տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,
 - ներդրումային ծրագրերի բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- տնտեսական բաժին,
- հաշվապահական հաշվառման բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին:

Նանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կարարելագործում

Նանձնաժողովի կարևորագույն գործառույթներից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կարարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից:

2010 թվականին կշարունակվեն **Էներգետիկայի բնագավառի** կարգավորման իրավական դաշտի կարարելագործման ուղղությամբ փարվող աշխատանքները:

2009 թվականին արդեն իսկ լրամշակվել են էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները, մասնավորապես՝ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման պայմանները, սահմանվել են միացման գործընթացի առանձին փուլերի իրականացման առավելագույն ժամկետներ: Ճարտարապետահարակազմային առաջադրանքը ձևավորելու փուլում կառուցապարտողների կողմից կոմունալ ծառայությունների միացման տեխնիկական պայմանների սրացման համար «Մեկ պատուհանի» համակարգի ներդրումն ապահովելու նպատակով համապատասխան լրացումներ են կատարվել բնական գազի և էլեկտրական էներգիայի մատակարարման ու օգտագործման կանոններում: Ընդ որում, բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում ու պայմանագրերում հստակեցվել են սպառողներին բնական գազի համար կանխավճարի պահանջ ներկայացնելու դեպքերը՝ բացառելով մատակարարի կողմից դրա անհարկի կիրառման հնարավորությունը:

Մատակարար-սպառող փոխհարաբերություններում ծագող վիճահարույց հարցերը նվազագույնի հասցնելու և մարտցվող ծառայությունների մակարդակը բարձրացնելու նկատառումներով 2010 թվականին հանձնաժողովը կշարունակի օրենսդրական դաշտի կարարելագործմանն ուղղված ուսումնասիրությունները:

ՆՏ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության գործունեության ծրագրով նախատեսվում է 2010 թվականին «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի 208 ՄՎր հզորությամբ նոր էներգաբլոկի, իսկ 2011 թվականին՝ «ՆրազՋԷԿ» ՓԲԸ-ի 440 ՄՎր հզորությամբ 5-րդ էներգաբլոկի գործարկումը, ինչի արդյունքում էականորեն կփոփոխվեն Նայասարանի էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը և էներգետիկական համակարգի անվտանգության ու հուսալիության մակարդակը: Այս զարգացումը, ինչպես նաև փարածաշրջանային էներգետիկական շուկային ինտեգրման միտումները,

անհրաժեշտություն կառաջացնեն 2010 թվականին վերանայելու և կադարելագործելու շուկայի գործող կանոնները:

Նպատակ ունենալով բարձրացնել բնական գազի բաշխման ցանցերի ընդլայնման արդյունավետությունը, նախատեսվում է 2010 թվականի ընթացքում մշակել նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը գազամատակարարման համակարգին միացման կարգ և սահմանել միացման վճարներ:

Նանձնաժողովը, հաշվի առնելով էներգետիկայի բնագավառում լիցենզավորման գործընթացում պարբերաբար առաջացող խնդրահարույց հարցերը, նախատեսում է 2010 թվականին լրամշակել ՏՏ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը:

Լիցենզավորված անձանց կողմից լիցենզիաների պայմանների կատարման ուսումնասիրության արդյունքները ցույց են փայլիս, որ հաճախակի են լիցենզիայի գործողության ժամկետում նոր արտադրական հզորությունների կառուցումը չավարտելու պատճառով երաշխիքային գումարները ՏՏ պետական բյուջե փոխանցելու ուշացման դեպքերը, որի հիմնական պատճառը լիցենզիայի և ֆինանսական երաշխիքի գործողության ավարտի ժամկետների համընկնումն է: ՏՏ պետական բյուջեի մուտքերի ապահովման կարգապահության բարձրացման նպատակով հանձնաժողովն լիցենզիա ստանալու հայր ներկայացնող անձանցից այսուհետ կպահանջի կառուցման լիցենզիայի գործողության հայցվող ժամկետից առնվազն մեկ ամիս ավելի երկար գործողության ժամկետով երաշխիքներ: Նաճախ են նաև դեպքերը, երբ մինչև կայանի գործարկումը փոխվում է ընկերությանը կառուցման փուլում ջրօգտագործման թույլտվությամբ փրված ջրի քանակը կամ ռեժիմը: Ուստի, նախատեսվում է էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու հայրով դիմած ընկերությունից պահանջել նաև նոր ջրօգտագործման թույլտվություն:

Նշված կարգի ընդունումից հետո փոփոխվել է նաև գործող օրենսդրական դաշտը. մասնավորապես, «էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական փեխնիկական վերահսկողության մասին» ՏՏ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական, 5,8 ՄՎ-ից բարձր դրվածքային հզորության ջերմամատակարարման, ինչպես նաև միջին ու բարձր ճնշման գազի համակարգերի նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների համար պահանջվում է իրավասու մարմնից ստանալ էներգատեղակայանքի գործարկման եզրակացություն: Էներգատեղակայանքի անվտանգ և հուսալի գործարկման առումով նշված փաստաթղթի առկայությունն ունի էական նշանակություն, ուստի նախատեսվում է այն ներառել էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի հայրով հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի ցանկում:

2010 թվականին, հաշվի առնելով նախորդ փուլերին ձեռք բերված փորձը, նախատեսվում է լրամշակել նաև ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգը, որի արդյունքում ավելի կհստակացվեն այդ գործընթացում կիրառվող ընթացակարգերը և մոտեցումները:

Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից «Էներգետիկայի մասին» ՏՏ օրենքի, հանձնաժողովի իրավական ակտերի և լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում փուլերի կիրառման մեխանիզմի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, հանձնաժողովը բոլորովին վերջերս մշակել է «Էներգետիկայի մասին» ՏՏ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով նախատեսվում է իրավախախտ լիցենզավորված անձանց նկատմամբ կիրառել նաև ֆինանսական բնույթի պատժամիջոցներ՝ փուլանքներ: Ներկայումս նախագիծը գտնվում է շահագրգիռ մարմինների քննարկման փուլում:

ՏՏ ջրային օրենսգրքի համաձայն, ջրային համակարգում սակագնային քաղաքականությունը և ոչ մրցակցային ջրամատակարարներին ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների տրամադրումն իրականացնում է հանձնաժողովը: Սակայն, հարկ է նշել, որ ջրային օրենսգրքում առկա թերություններն ու բացթողումները էապես խոչընդոտում են արդյունավետ և ամբողջական կարգավորման իրականացումը: Մասնավորապես, ջրային համակարգում կարգավորող մարմնին վերապահված իրավասությունների չափից ավելի ընդհանուր և ոչ հստակ սահմանումը, ոլորտում սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման հիմնարար սկզբունքի ապահովման համար կարգավորող մարմնի անհրաժեշտ լիազորությունների բացակայությունը (ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերի և խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների սահմանում), կարգավորվող անձանց գործունեության վերահսկման գործուն լծակների, ինչպես նաև վերջիններիս կողմից իրավախախտ վարքագծի դրսևորման դեպքերում փուլեր և փուլանքներ կիրառելու իրավասությունների բացակայությունը և այլն: Նշված թերությունների և բացթողումների վերացման նպատակով հանձնաժողովը բազմիցս հանդես է եկել համապատասխան առաջարկություններով, մասնակցել կազմակերպված քննարկումներին և աշխատանքային խմբերի աշխատանքներին: Ելնելով այդ խնդիրների լուծման անհրաժեշտությունից՝ 2010 թվականին կշարունակվեն ջրային համակարգում արդյունավետ և ամբողջական կարգավորում իրականացնելու համար անհրաժեշտ օրենսդրության կատարելագործմանն ուղղված աշխատանքները՝ կիրառելով նաև կարգավորման լավագույն փորձը:

Նեռահաղորդակցության (Էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառն իր բազմաբնույթ խնդիրներով շարունակում է հանձնաժողովի գործունեության մեջ մնալ որպես գերակա ուղղություն: 2009 թվականին մեծածավալ աշխատանքներ են փարվել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՆՏ օրենքով վերապահված գործառույթներն իրականացնելու համար: Մասնավորաբար, հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի զարգացման միջազգային միտումները և ելնելով իր իսկ հաստատված «Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականությունից», հանձնաժողովը գործել է՝ հիմնվելով ոլորտի արդյունավետ զարգացման արդեն իսկ ընտրված ուղենիշների վրա: 2009 թվականին կատարված աշխատանքներից հատկապես կարևորվում են.

- միջազգային զանգերի տերմինացիա իրականացնելու կարգի հաստատումը, որով կանոնակարգվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում միջազգային մուտքային զանգերի տերմինացիայի (վերջնավորման) իրականացման պայմանները և հստակեցվել են անօրինական տերմինացիան բնորոշող չափորոշիչները.
- դասակարգվել է միջազգային «ԱյՓի» (IP) տարանցման ծառայությունը, սահմանվել է միջազգային «ԱյՓի» տարանցման ծառայությունների շուկան և այդ շուկայում անձի գերիշխող դիրք զբաղեցնելու չափորոշիչները, ինչը հնարավորություն կընձեռի վերլուծելով միջազգային «ԱյՓի» տարանցման ծառայությունների շուկան, ճանաչել այդ շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներին և իրականացնել վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների սակագնային կարգավորումը.
- «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ամրակցված հեռախոսակապի ծառայությունների այլընտրանքային սակագնային փաթեթների սահմանումը, ինչը հնարավորություն է ընձեռել ընդլայնել ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագնային փաթեթների տեսականին.
- ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգի պարզեցումը՝ հայտերի քննարկման և համապատասխան որոշումների ընդունման ժամկետները կրճատելու, ինչպես նաև արբանյակային կապի երկրային կայանների թույլտվության տրամադրման և ռադիոհաճախականության օգտագործման վճարների չափը նվազեցնելու առումով.

- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա ունեցող մի շարք օպերատորների հանրային ամրակցված ցանցի համարային շարքեր, ոչ աշխարհագրական և միջազգային ազդակների հանգույցների կողեր պրամադրելը՝ նրանց հնարավորություն ընձեռելով ունենալու սեփական հեռախոսային ամրակցված ցանց և հեռախոսային ծառայություններ մատուցելու հանրապետության փարածքում և նրա սահմաններից դուրս.
- էլքային միջազգային ձայնային ծառայություններ մատուցող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող հաշվեկալությունների ձևերի հասարակումը, որոնց հիման վրա հանձնաժողովը կանոնավոր կերպով կիրականացնի էլքային միջազգային ծառայությունների մատուցման վերաբերյալ փեդեկապիտության հավաքագրման, ամփոփման և վերլուծության աշխատանքներ.
- հանձնաժողով ներկայացվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի փեխնիկական նախագծում ընդգրկվող փաստաթղթերի ցանկի սահմանումը, որով կանոնակարգվել և հստակեցվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման լիցենզիա ստանալու համար հանձնաժողով ներկայացվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի փեխնիկական նախագծում ընդգրկվող փաստաթղթերի ցանկը: Ցանկի սահմանումը նպատակ ունի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի նախագծերն իրականացնել դրանցում ընդգրկված փաստաթղթերի նկատմամբ նույն պահանջներով, ինչը միատեսակ դարձնելով ցանցերի ենթակառուցվածքների գրանցումը, հնարավորություն կտա իրավասու մարմիններին արտակարգ իրավիճակներում կամ ռազմական դրության պարագայում հստակորեն իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործումը և կառավարումը.
- սիրողական ռադիօօպերատորների թույլտվությունների դասակարգման և փրամադրման, սիրողական ռադիոկայանների գրանցման, փեդադրման և օգտագործման կանոնների, ինչպես նաև որակավորման չափանիշներին սիրողական ռադիօօպերատորների համապատասխանությունն ստուգելու կարգի հասարակումը, որոնցով կանոնակարգվել է Նայաստանի Նանրապետությունում սիրողական ռադիոյին վերաբերող իրավական դաշտը:

Գործարար միջավայրի զարգացմանը նպաստելու նկատառումով նախատեսվում է 2010 թվականին էականորեն պարզեցնել ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լիցենզիաների փրամադրման գործընթացները: Միաժամանակ, հաշվի առնելով միջազգային փորձը, 2010 թվականին կշարունակվեն ուսումնասիրությունները համընդհանուր ծառայությունների ներդրման, այդ թվում՝ համընդհանուր ծառայությունների հիմնա-

դրամ սպեղծելու ուղղությամբ:

2010 թվականին հեթերոդակական աշխարհում կարավի ՏՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և ՏՏ փնտրասական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գործառույթների հսկակ փարանջապաման և ներդաշնակ փոխհարաբերությունների հաստատման ուղղությամբ:

Տրամադրված է պահանջում նաև ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների փրամադրման և օգտագործման պարտադիր վճարների գանձման խնդիրը: Առ այսօր այս գործառույթն իրականացվում է հանձնաժողովի ընդունած իրավական ակտի համաձայն, ինչը մշտապես խնդիրներ է հարուցում թույլտվություն ունեցող անձանց և հանձնաժողովի փոխհարաբերություններում: Տաշվի առնելով հարցի կարգավորման անհրաժեշտությունն ու հրատարակությունը, հանձնաժողովը դիմել է ՏՏ կառավարություն՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Տայաստանի Տանրապետության օրենքում լրացում կատարելու օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու խնդրանքով: Օրենքի ընդունումից հետո կմշակվեն թույլտվություն ունեցող անձանց և հանձնաժողովի փոխհարաբերությունները հսկակեցնող ենթաօրենսդրական ակտեր:

Աշխարհում կարավեն Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող համակարգի բարեփոխման և այն Եվրամիության անդամ երկրներում գործող կարգավորող համակարգին համապատասխանեցման ուղղությամբ: Նախատեսվում է նաև ընդունել միջօպերատորական փոխկապակցման ծառայությունները կանոնակարգող իրավական ակտեր:

Տերմելով գիտարեխնդիկական առաջընթացի համաշխարհային միտումներին և, նկատի ունենալով, որ առաջիկայում անհրաժեշտություն կառաջանա Տայաստանի Տանրապետությունում ևս ներդնելու նոր սերնդի ցանցեր (NGN- Next Generation Networks), գալիք փարի կշարունակվի այդ ցանցերի շահագործմանն առնչվող խնդիրների ուսումնասիրությունը՝ կարևորելով հսկակապես բջջային կապի օպերատորների ցանցերի փոխկապակցման հարցերը:

2010 թվականին հանձնաժողովի գործունեության առաջնահերթություններից կհամարվի նաև բջջային կապի 3-րդ սերնդի ցանցերի՝ 3G ստանդարտի ներդրման ծավալների աճի ապահովումը, ինչը հնարավորություն կընձեռի բջջային ցանցերի բաժանորդներին՝ բարձր արագագործություն ունեցող համակարգի միջոցով ստանալու ծառայությունների ավելի մեծ փեսականի, ինչպիսիք են, օրինակ, բջջային հեռախոսակապի միջոցով փեսակոնֆերանսները, ապրանքների կամ ծառայությունների համար Էլեկտրոնային վճարումների իրականացումը, բժշկական ախտորոշման ծառայությունները և այլն:

2010 թվականի ընթացքում առանձնակի ուշադրություն կդարձվի հեռավոր մարզերում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի զարգացումը խթանող պայմանների ստեղծմանը:

Ներկելով եվրոպական երկրներում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լայնորեն ներդրվող լայնաշերտ ծառայությունների մատուցման (broadband) փորձին, 2010 թվականին կձեռնարկվեն այդ ծառայությունների մատուցման համար նպաստավոր պայմաններ և իրավական դաշտ ստեղծելու աշխատանքները: Անհրաժեշտ քայլեր կարվեն նաև միջազգային IP փարանցման ծառայությունների շուկայում մրցակցության զարգացումը խթանելու ուղղությամբ: Մասնավորաբար, միջոցներ կձեռնարկվեն միջազգային IP փարանցման այլընտրանքային նոր օպերատորների մուտքը շուկա ապահովելու համար՝ հնարավորություն ընձեռելով նոր օպերատորներին կառուցելու և շահագործելու միջազգային IP փարանցման կապուղիներ ինչպես ՏՏ փարածքում, այնպես և սահմանակից երկրների փարածքով մինչև միջազգային խոշորագույն կապի հանգույցներ, ինչը անմիջական ազդեցություն կունենա ինտերնետ ծառայությունների մանրածախ վաճառքի վրա:

2. Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

2009 թվականի փետրվար ամսին «**ՀայՌ-ուսագազարդ**» **փակ բաժնետիրական և «Տրանսգազ» սահմանափակ պապասխանարվությամբ ընկերությունները** հայտեր են ներկայացրել հանձնաժողով՝ վերանայելու սպառողներին վաճառվող բնական գազի, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման, բաշխման և փոխադրման սակագները: Նաշվի առնելով 2009 թվականի ապրիլի 1-ից հանրապետություն ներկրվող բնական գազի գնի թանկացումը, ինչպես նաև 2007-2008 թվականներին գազամատակարարման համակարգում իրականացված ներդրումների փոխհատուցման, գազամատակարարման ընդլայնման հետ կապված որոշ շահագործման և պահպանման ծախսերի փոփոխություններն ու 2009 թվականի պետական բյուջեում

ամրագրված ԱՄՆ դուլար/դրամ փոխարժեքի մեծությունը, հանձնաժողովը վերանայել և սահմանել է սպառողներին վաճառվող բնական գազի, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման, փոխադրման և բաշխման նոր սակագներ:

Ներկայումս բնական գազի գործող սակագնային համակարգը տարբերակված է երկու խմբերի՝ ամսական մինչև 10000 խմ սպառում ունեցող բաժանորդներ, այդ թվում՝ բնակչությունը, և 10000 խմ և ավելի սպառում ունեցող բաժանորդներ: Նանձնաժողովն այժմ քննարկում է բնական գազի գործող սակագնային կառուցվածքի կատարելագործման ուղղությունները և կմշակի դրանց փուլային ներդրման առաջարկություններ:

2009 թվականի ապրիլի 1-ից սպառողներին վաճառվող բնական գազի սակագնի բարձրացումը անհրաժեշտություն առաջացրեց վերանայել նաև էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի սակագները:

Նաշվի առնելով «Նրագդանի ՋԷԿ» և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ներին վաճառվող բնական գազի նոր սակագները, «Նայասրանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ի համար հաստատված էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանները և հիմք ընդունելով էլեկտրական էներգիայի արտադրության ու սպառման կանխատեսումները, ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի ու 2008 թվականին էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված ներդրումների վերլուծության արդյունքները, ինչպես նաև միջուկային վառելիքի արժեքի նախատեսվող թանկացումը, 2009 թվականի պետական բյուջեում ամրագրված ԱՄՆ դուլար/դրամ փոխարժեքի մեծությունը և մի շարք այլ գործոններ, հանձնաժողովը 2009 թվականի ապրիլի 1-ից վերանայել է էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագները:

Էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական կայունությունն ապահովելու, ինչպես նաև 2009 թվականի ապրիլի 1-ից վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի 5 դրամից ավելի աճ թույլ չտրալու նպատակով, ՆՏ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության առաջարկության համաձայն, էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացող ֆինանսական ճեղքվածքը փակվել է «Որոտանի ՆԷԿՆ» ՓԲԸ-ից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագնի հաշվարկում ներառված շահույթի և մաշվածության ծախսային հոդվածների նվազեցման հաշվին: Արդյունքում՝ 2009 թվականի ապրիլի 1-ից գործողության մեջ են մտել նոր սակագներ ինչպես արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի և էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների, այնպես և վերջնական սպառողների համար: Միաժամանակ, սահմանվել են «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից «Նաիրիպ Գործարան» ՓԲԸ-ին առաքվող ջերմային

էներգիայի սակագները և օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված արտադրության տեղակայանքներից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի առավելագույն մեծությունը:

Տաշվի առնելով գործող սակագներում ներառված և 2009 թվականի ապրիլ-օգոստոս ամիսներին ձևավորված ՏՏ դրամ/ԱՄՆ դոլար (եվրո) միջին ամսական փոխարժեքների էական փոփոխությունը, անհրաժեշտություն առաջացավ վերանայել արտադրող կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության), «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական շուկային էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման հաստատագրված ամսական վճարը, որոնք ուժի մեջ կմտնեն ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ից:

Ինչպես հայտնի է, նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանները, կախված իրենց տեսակից (կառուցված բնական ջրահոսքերի, ոռոգման համակարգերի կամ խմելու ջրաբարների վրա), ունեն սահմանված հաստատուն բազիսային սակագներ, որոնք, համաձայն ընդունված մեթոդիկայի՝ էլնելով սղաճի և փոխարժեքի փոփոխություններից, յուրաքանչյուր տարի ենթարկվում են ճշգրտման: Ներկայումս քննարկվում է բազիսային սակագների փոփոխության անհրաժեշտության հարցը: Բացի այդ, հանրապետությունում գործում են 31 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնց սակագները հաշվարկվում են՝ էլնելով համապատասխան մեթոդիկայով ամրագրված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքից: Արդեն համալիր ուսումնասիրվում և քննարկվում է նշված մեթոդիկայում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության հարցը՝ նպատակ ունենալով հաշվի առնել տնտեսական միջավայրի առկա փոփոխություններն ու պայմանները:

Մինչև 2009 թվականի դեկտեմբերի 1-ը, հաշվի առնելով դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները, սահմանված մեթոդիկայով կճշգրտվեն նշված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր տարի: Նույն սկզբունքով, օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված արտադրության (կոգեներացիա) էլեկտրական և ջերմային էներգիայի սակագների հաշվարկի մեթոդիկայի համաձայն, հաշվի առնելով դրամի փոխարժեքի, սղաճի և բնական գազի սակագնի փոփոխությունները՝ յուրաքանչյուր տարի իրականացվում է սակագների ճշգրտում:

Յուրաքանչյուր փարի՝ մինչև փարեվերջ, ուսումնասիրվում և հասարակում են երկրորդը սակագնային համակարգում գործող էլեկտրակայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող պայմանագրային և փնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

«Նանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՏՏ օրենքի պահանջներից ելնելով՝ մինչև ընթացիկ փարվա ավարտը նախատեսվում է ճշգրտել և հասարակել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2010 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների փարեկան մեծությունները:

2008 թվականի դեկտեմբեր ամսին «Նայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն հայր էր ներկայացրել հանձնաժողով՝ վերանայելու սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները: Նաշվի առնելով ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները, միջին աշխատավարձի մեծության ավելացման անհրաժեշտությունը, ինչպես նաև պետական բյուջեից հատկացվելիք սուբսիդավորման կրճատումը, 2009 թվականի սկզբին վերանայվել են «Նայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները: Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման գումարային սակագինը 2009 թվականի ապրիլի 1-ից ավելացել է 39.78 դրամ/խմ-ով (ներառյալ ԱԱՏ-ն):

2009 թվականի փետրվար ամսին սակագների ճշգրտման առաջարկով հանձնաժողով էր դիմել «Երևան Զուր» ՓԲԸ-ն՝ իր քայլը հիմնավորելով բազիսային սակագների ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված ցուցանիշների, այն է՝ մանրածախ ջրամատակարարման ծավալների, փարեկան սղաճի, դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների նախորդ հաշվարկային փարում փեղի ունեցած փոփոխություններով: Մանրածախ ջրամատակարարման ծավալների հիմնավորման նպատակով իրականացվել է մոնիթորինգ, որի արդյունքների վերլուծության հիման վրա ընկերության ներկայացրած 2008 թվականի սակագների ճշգրտման նպատակով հաշվառվող մանրածախ ջրամատակարարման ծավալներն ավելացվել են շուրջ 6 մլն խորանարդ մետրով: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, 2009 թվականի բազիսային սակագինը՝ 158.4 դրամ/խմ (ներառյալ ԱԱՏ-ն), ավելացվել է 22.6 դրամ/խմ-ով (ներառյալ ԱԱՏ-ն): Արդյունքում՝ 2009 թվականի հուլիսի 8-ից գործում են «Երևան Զուր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայու-

թյունների մաքուցման ու ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին խմելու ջրի մաքակարարման և ջրահեռացման մեծածախ ծառայությունների մաքուցման նոր սակագներ, որոնք 2010 թվականին նույնպես կճշգրտվեն՝ էլնելով մանրածախ ջրամաքակարարման ծավալների, փարեկան սղաճի, եվրո/դրամ փոխարժեքի և «Երևան Զուր» ՓԲԸ-ին մաքակարարվող էլեկտրաէներգիայի սակագների 2009 թվականի փաստացի գնահատականներից:

Յուրաքանչյուր փարի, սակագների ճշգրտման ընթացքում, «Երևան Զուր» ՓԲԸ-ի կողմից ներկայացվող մանրածախ խմելու ջրի փաստացի ծավալները ենթարկվում են ուսումնասիրության (մոնիթորինգ): Ներկայումս հանձնաժողովը ընկերության հետ համապետ քննարկում է մոնիթորինգի անցկացման կարգի լրամշակման հարցը՝ նպատակ ունենալով այն դարձնել առավելագույնս փոխադարձ ընդունելի:

Կշարունակվեն նաև բազմաբնակարան շենքերում ջրամաքակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի կառավարումը (սպասարկումը) համապատասխան ջրամաքակարարող ընկերություններին հանձնելու և նշված ծառայությունների դիմաց վճարներ սահմանելու վերաբերյալ հարցերի քննարկումները:

Նանձնաժողովը, հիմք ընդունելով **փոխկապակցման ծառայությունների վճարների կարգավորման ոլորտում** Եվրամիության հանձնարարականները և հաշվի առնելով «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» փակ բաժնեպիրական ընկերությունների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վճարների վերաբերյալ վերջիններիս ներկայացրած առաջարկությունները, 2009 թվականի օգոստոսին համապատասխան որոշմամբ սահմանել է «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» փակ բաժնեպիրական ընկերությունների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վճարները: Նամաձայն այդ որոշման՝ նախատեսվում է 2010 թվականի հունվարի 1-ից կիսամյակային քայլերով նվազեցնել հիշյալ ընկերությունների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև գործող փոխկապակցման վճարները՝ շուրջ 10-70%-ի չափով և սկսած 2011 թվականի հուլիսի 1-ից կիրառել 11.4 դրամ միասնական վճար: Միաժամանակ, բջջային ցանցից դեպի Երևան քաղաքի ֆիքսված ցանց զանգի վերջնավորման մեկ թույլի սակագինը կկազմի 9 դրամ, իսկ բջջային ցանցում միջազգային մուտքային զանգի վերջնավորման մեկ թույլի սակագինը՝ 12 ԱՄՆ ցենտ (բոլոր վճարները ներկայացված են առանց ԱԱՀ-ի):

Նարկ է նշել, որ փոխկապակցման ծառայությունների վճարների նվազեցման արդյունքում էականորեն կնվազեն նաև բջջային ցանցերում, բջջային ցանցերից դեպի ֆիքսված ցանց և ֆիքսված ցանցից դեպի բջջային ցանցեր բաժանորդներին մաքուց-

վող ծառայությունների սակագները:

2009 թվականի օգոստոս ամսի մեկ այլ որոշմամբ հանձնաժողովը սահմանել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական բջջային կապի ցանցերում կարճ (SMS) և մուլտիմեդիա (MMS) հաղորդագրությունների վերջնավորման փոխկապակցման ծառայությունների վճարները՝ հիմնված Եվրամիության անդամ երկրներում կիրառվող համանման ծառայությունների վճարների և դրանց փոփոխման իրապեսական կանխաբեռումների վրա: Նամաձայն այդ որոշման, «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական բջջային կապի ցանցերում այժմ գործող 11 դրամ/SMS և 11 դրամ/MMS վերջնավորման փոխկապակցման ծառայությունների վճարների փոխարեն 2010 թվականի հունվարի 1-ից կգործեն 9 դրամ/SMS և 9 դրամ/MMS փոխկապակցման վճարները, որոնք յուրաքանչյուր հաջորդ կիսամյակի ընթացքում նվազելով ևս 2 դրամով՝ 2011 թվականի հուլիսի 1-ին կկազմեն 3 դրամ/SMS և 3 դրամ/MMS (բոլոր վճարները ներկայացված են առանց ԱԱՀ-ի): Այսինքն՝ SMS և MMS հաղորդագրությունների վերջնավորման փոխկապակցման ծառայությունների վճարները յուրաքանչյուր կիսամյակ կնվազեն 18%-ով, իսկ 2011 թվականի հուլիսի 1-ից կկիրառվեն գործող փոխկապակցման ծառայությունների 72%-ով նվազեցված վճարներ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ «ԱրմենՏել» և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ների մրցակցության արդյունքում 2009 թվականի ընթացքում էլեկտրոնային հաղորդակցության շուկայում ևս կապարվել է դրական փեղաշարժ՝ շարժական կապի սակագների նվազման և հեռախոսային կապի ծավալների (տրաֆիկ) աճի առումով: Բջջային կապի երրորդ օպերատորի՝ «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի մուտքը հեռահաղորդակցության շուկա կխորացնի մրցակցությունը այս երեք ընկերությունների միջև, որի արդյունքում ակնկալվում է սակագների նվազման նոր փուլ:

Կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկապնտեսական հաշվետվությունները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար: Այդ առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ փարանջապել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կապարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն: Այս համակարգն արդեն ներդրվել է

Էլեկտրաէներգետիկայի, գազամատակարարման բնագավառների և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նաև ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Տիշյալ աշխատանքների իրականացման արդյունքում կրճատվել են էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգի ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները:

2010 թվականին աշխատանքներ կատարվեն նաև էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի համար և փոստային կապի բնագավառում՝ «Նայփոստ» ՓԲԸ-ի համար ենթահաշիվների համակարգի ներդրման ուղղությամբ:

Նախորդ տարում մշակվել և հաստատվել են «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող սակագնային կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ցանկը, ծախսերի բաշխման մեթոդաբանությունը և մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդիկան: Տիպ ընդունելով նշված փաստաթղթերը, նախատեսվում է լրամշակել «ԱրմենՏել» փակ բաժնեպիրական ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը:

Փոստային կապի և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառներում ենթահաշիվների համակարգ ներդնելու հետ կապված՝ նախատեսվում է լրամշակել այդ բնագավառների ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը, որից հետո կկրճատվի նաև հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների ծավալը: Նշված աշխատանքներն էապես կնպաստեն կարգավորվող ընկերությունների ծախսերի մոնիթորինգի արդյունավետության բարձրացմանը և առավել հիմնավորված սակագների սահմանմանը:

Նախատեսվում է նաև «Նայփոստ» ՓԲԸ-ի համար մշակել հանձնաժողով ներկայացվող տեխնիկապնդեսական հաշվետվության ձևեր:

2010 թվականի ընթացքում կարգավորվող ընկերությունները կներկայացնեն հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կկատարվի ընկերությունների ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Էլեկտրաէներգետիկական և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր վեբ կայքում (www.psrc.am) հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկապնդեսական ցուցանիշները:

3. Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության մոնիթորինգ

Լիցենզավորումը կարգավորման այն կարևոր գործառնություններից է, որը թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող փոքր ընկերությունների համար վարել միապետակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պարասխանավորության միջոցներ կիրառել իրենց պարականությունները ոչ պարզաճ կարարող ընկերությունների նկատմամբ:

2009 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը **Էներգետիկայի բնագավառում** փրամադրվել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման՝ 5, հողմային էլեկտրակայանի, ֆոտոէլեկտրական կայանի, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանի, շոգեգազային ցիկլով էլեկտրական էներգիա արտադրող «Նրագդան-5» կայանի, ջերմային էներգիայի բաշխման ցանցի կառուցման՝ 1-ական, փոքր ՆԷԿ-երում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության՝ 5, էլեկտրական էներգիայի ներկրման՝ 1, բնական գազի ներկրման՝ 1, էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման՝ 2 լիցենզիա: Միաժամանակ, երկարաձգվել են նախկինում փրամադրված 25 լիցենզիաների գործողության ժամկետները, ինչպես նաև համաձայնություն է փրվել բաժնեմասերը վաճառելու՝ 4, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը գրավ դնելու՝ 10, լիցենզիան վերաձևակերպելու՝ 1, գույքի նկատմամբ իրավունքները փոխանցելու՝ 1 դիմումների:

Նույն ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում փրամադրվել են փյուլյաների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման՝ 44 և ձայնային ծառայությունների մատուցման 8 լիցենզիաներ:

Կարգավորվող բնագավառներում գործունեության լիցենզիաների (թույլտվությունների) փրամադրման գործընթացը կշարունակվի նաև 2010 թվականին:

Նանձնաժողովի կարգավորման ոլորտում գրնվող ընկերությունները ապահովում են **ՏՏ պետական բյուջեի** գալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտվությունների) փուրքերի, ռադիոհաճախականությունների փրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև փոքր հիդրոէլեկտրակայանները լիցենզիաների գործողության ժամկետում չգործարկելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: Ակնկալվում է, որ 2009 թվականին նշված աղբյուրներից ՏՏ պետական բյուջե փոխանցված գումարները կկազմեն շուրջ 5,6 մլրդ

դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 4,7 մլրդ դրամը, կկազմեն ռադիոհաճախականությունների օգտագործման գծով մուտքերը: Ըստ կանխատեսումների, 2010 թվականին նշված աղբյուրներից ՆՏ պետական բյուջե կփոխանցվի շուրջ 5,4 մլրդ դրամ: Մուտքերի այս նվազումը հիմնականում պայմանավորված է կարգավորվող ընկերությունների կողմից ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների գծով նախորդ տարիներին ՆՏ պետական բյուջեի նկատմամբ ունեցած ժամկետանց պարտքերը 2009 թվականին հավաքագրելու իրողությամբ:

Նանձնաժողովը մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզիաների պայմանների պահպանման և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին:

2009 թվականին «Նայաստրանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում ուսումնասիրության է ենթարկվել նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման գործընթացը, որի արդյունքում վեր են հանվել մի շարք թերություններ և ընկերությանն առաջարկվել է միջոցներ ձեռնարկել նշված գործընթացն առավել թափանցիկ և վերահսկելի դարձնելու ուղղությամբ: Նաշվի առնելով խնդրի կարևորությունը, հանձնաժողովը 2010 թվականին ևս կուսումնասիրի այդ գործընթացը:

Կենցաղային նպատակներով բնական գազի սպառողների ներմուծային գազապառման համակարգերի շահագործման անվտանգության մակարդակը գնահատելու նպատակով 2009 թվականին «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ում շարունակվել են սպառողների գազասպառման ներմուծային համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ուսումնասիրությունները՝ հարցումներ անցկացնելով Նայաստրանի ողջ տարածքի շուրջ 1000 սպառողների մոտ: Արձանագրվել է, որ առաջընթացն ակնհայտ է, և առաջարկվել է ընկերությանը ջանքեր գործադրել առանձին թերություններն ու բացթողումները բացառելու համար: Սպառողների ներմուծային գազասպառման համակարգերի շահագործման անվտանգության խնդիրը 2010 թվականի ընթացքում ևս կշարունակի մնալ հանձնաժողովի հսկողության ներքո:

Բնական գազի մատակարարի կողմից սպառողների սպասարկման որակի բարելավմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը գնահատելու նպատակով ընթացիկ տարում շարունակվել է տեղեկատվական բազայի ձևավորման գործընթացը, ինչպես նաև իրականացվել է հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության ուսումնասիրություն, որի արդյունքում ընկերությանն առաջարկվել է մշակել և ներդնել տեղեկատվության գրանցման միասնական համակարգ: 2010 թվականին կշարունակվի տեղեկատվական բազայի ձևավորման գործընթացը, ինչը թույլ կտա սահմանել սպառողների սպասարկման որակի բազիսային

ցուցանիշներ, մասնավորապես՝ բնական գազի մաքարաքարման ընդհատման և դադարեցման դեպքերի քանակի և փրկության, և հեղափոխում վերահսկել դրանց պահպանումը:

Վերը նշված ցուցանիշները, ինչպես նաև մաքարաքարի կողմից սպասարկման որակի վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող այլ փնտրությունները յուրաքանչյուր եռամսյակ գերազանցում են հանձնաժողովի վեր կայքում:

Նանձնաժողովը նշապատեա ուշադրության կենտրոնում է պահում նաև **ջրամաքարաքարման ոլորտում** սպառողների սպասարկման որակի խնդիրը: Նանձնաժողովի որոշմամբ «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նայջրմուղկոյուղի» և «Երևան Զուր» ՓԲԸ-ներում 2006 թվականից ներդրվել են սպառողների սպասարկման որակի ցուցանիշների գրանցամաքյաններ և հասարակել դրանց վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող փնտրության օրինակելի ձևերը: Նանձնաժողով է ներկայացվում նաև սպառողների հեռախոսագանգերին, գրավոր հարցումներին և դիմում-բողոքներին արձագանքման, ինչպես նաև ջրամաքարաքարման հրապարակված գրաֆիկների խախտումների վերաբերյալ փնտրության, որը նույնպես յուրաքանչյուր եռամսյակ գերազանցում է հանձնաժողովի վեր կայքում:

Սպառողների սպասարկման որակի վերաբերյալ առավել իրական պարկեր ունենալու նպարակով 2010 թվականին կիրականացվեն «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից հավաքագրվող փնտրության հավասարության ուսումնասիրություններ:

2010 թվականին **հեռահաղորդակցության բնագավառում** համակողմանիորեն կուսումնասիրվի հանձնաժողովի ընդունած չափորոշիչների համաձայն էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գերիշխող դիրք ունեցող օպերատորների գործունեությունը, անհրաժեշտության դեպքում կանցկացվի մոնիթորինգ՝ դիրքի չարաչահման դեպքերը կանխելու և բացառելու համար: Ներկողական աշխատանք կարավի էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի լիցենզավորված ընկերությունների կողմից լիցենզիաների պայմանների կարարման վերահսկողության ուղղությամբ: Տիմնվելով այդ ընկերությունների նախընթաց արարիների գործունեության վերլուծության վրա, նախարեսվում է մոնիթորինգ իրականացնել այն ընկերություններում, որոնցում կնկարվեն լիցենզիաների պայմաններից շեղումներ:

2010 թվականին հանձնաժողովը կշարունակի հեղափոխականություն դրսևորել հանրությանը արագագործ ինտերնետային ծառայությունների հասանելիության մարչելիության ապահովման ուղղությամբ: Լիցենզավորված ընկերությունների՝ այդ

նպատակին միավաճ նախաձեռնությունները խթանելու համար կիրականացվի առկա շուկայի մոնիթորինգ:

4. Ներդրումային ծրագրեր և սպառողների սպասարկման որակի ցուցանիշներ

Կարգավորման կարևոր գործոններից է նաև կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերը հանձնաժողովի հետ համաձայնեցման գործընթացը, որի դեպքում խնդիր է դրվում ներդրումներն ուղղել կարգավորվող բնագավառներում նորարական, ավելի էներգախնայող և արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և մաշված սարքավորումների փոխարինմանը կամ ենթակառուցվածքների վերակառուցմանը: Այս նպատակադրմամբ հանձնաժողովը ջանքեր է գործադրում կարգավորվող բնագավառներում արդյունավետ ներդրումների իրականացումը խրախուսելու համար: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ կարգավորվող ընկերությունների կատարած ներդրումների վերադարձի հետ կապված ծախսերը ներառվում են սպառողներին մատուցվող ծառայությունների սակագներում. այսինքն՝ ներդրումներն ուղղակիորեն ազդում են սակագների վրա և, որպես կանոն, կարճաժամկետ հեռանկարում վերածվում են դրանց աճին նպաստող էական գործոնների: Նաշվի առնելով այս իրողությունը, ներդրումների առավել արդյունավետ ուղղությունների բացահայտման և կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ ներդրումային ծրագրերի առաջնահերթ ուղղությունների որոշման նպատակով հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրում և վերլուծում է կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերը:

Քալիք փարի կշարունակվի էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը: Վերլուծության կենթարկվեն ընկերությունների 2009 թվականի ներդրումային գործունեության արդյունքները և կիրառարակվեն համապատասխան վերլուծական տեղեկանքներ: Կշարունակվեն նաև կարգավորվող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման չափանիշների կատարելագործման և վերահսկման աշխատանքները:

«Նայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացում գնահատման չափանիշների կատարելագործմանն ուղղված աշխատանքները ևս կլինեն հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Տիմնվելով արդեն իսկ կուրակված փորձի վրա, ընկերության ներդրումային ծրագրում սպառողների

հոսանքագրկումների քանակի և տևողության, սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության ցուցանիշների ծրագրային մեծությունները սահմանվում են Նայաստանի Նանրապետության յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի համար: Այս մոտեցումը թույլ է տալիս ներդրումներն առաջին հերթին նպատակատուղել առավել վարթար վիճակում գրավող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների առաջնահերթ բարելավմանը: Նարկ է նշել նաև, որ սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը, սկսած 2005 թվականից, յուրաքանչյուր եռամսյակ ամփոփվում և հրապարակվում է հանձնաժողովի վեբ կայքում: Նույն կայքում հրապարակվում են նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր իրականացնող ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ վերլուծական տեղեկանքները:

2010 թվականին հանձնաժողովը կքննարկի «Նայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից համաձայնեցման ներկայացվող 2011-2014 թվականների ներդրումային ծրագիրը և կընդունի համապատասխան որոշում՝ սահմանելով սպասարկման որակի ցուցանիշների նոր ծրագրային մեծություններ: Կամփոփվեն նաև ընկերության 2009 թվականի ներդրումային գործունեության արդյունքները՝ հաշվի առնելով Նայաստանի Նանրապետության մարզերի և Երևան քաղաքի համար սահմանված սպասարկման որակի ծրագրային ցուցանիշների կատարման մակարդակը:

2010 թվականին կշարունակվի նաև «**ՆայՌ-ուսգագարդ» փակ բաժնետիրական ընկերության** կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, կամփոփվեն ընկերության 2009 թվականի ներդրումային գործունեության արդյունքները: Ընդ որում, խնդիր է դրվում ընկերության 2011-2014 թվականների ներդրումային ծրագրի համաձայնեցման ժամանակ այս ընկերությունում ևս ներդնել ներդրումների առանձին ուղղությունների արդյունավետության գնահատման չափանիշներ:

Նանձնաժողովը կշարունակի **փոքր հիդրոէներգետիկայի բնագավառի** զարգացմանը միտված իր հետևողական քաղաքականությունը: 2009 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում են 75 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 67-ը գրավում են կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 95 ՄՎտ, որոնք միջին տարեկան հաշվով ունակ են արտադրելու շուրջ 331 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 158 ՄՎտ, և ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն ավելի քան 560 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրո-

Էլեկտրակայանների գործարկումից հետո Նայասպանի Նանրապետությունում կգործեն 142 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ 253 ՄՎտ գումարային հզորությամբ, և միջին փարեկան հաշվով կարպադրեն շուրջ 891 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որը կազմում է այսօրվա սպառման ծավալների գրեթե 19%-ը: Այդ փեդեկապությունը յուրաքանչյուր փարի ամփոփվում և փեդադրվում է հանձնաժողովի վեբ կայքում(www.psrc.am):

Ընկերություններին գնումների իրականացման ավելի ճկուն մեխանիզմներ կիրառելու հնարավորություն ընձեռելու նկատառումով, 2009 թվականից գնումների կարգերի սահմանման իրավասությունը վերապահվել է «Նայասպանի էլեկտրական ցանցեր», «ՆայՌուսգագարդ» և «Միջագային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ներին, «Տրանսգագ» ՍՊԸ-ին և «ՆրագՋԷԿ» ԲԲԸ-ին: Նանձնաժողովն այդ ընկերությունների համար սահմանել է միայն գնումների իրականացման սկզբունքները: Այդ առնչությամբ 2009 թվականին լրամշակվել են նաև ընկերությունների կողմից կատարված գնումների մասին հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների ձևերը: 2010 թվականին կշարունակվեն աշխատանքները լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գնումների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Նանձնաժողովը ջանքեր է գործադրում կատարելագործելու **խմելու ջուր մատակարարող ընկերություններին** ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները: «Նայջրմուդկոյուդի», «Երևան Ջուր» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ներն արդեն յուրաքանչյուր փարի հանձնաժողովի հաստատման են ներկայացնում սպառողների ջրամատակարարման փառության փաստացի մեծությունները՝ փվյալ փարեսկզբի դրությամբ, և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ փարեսկզբի համար: Այս մոտեցումը հնարավորություն է փալիս առաջնահերթ բարելավել առավել վարթար վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարումը: Նստակցվել են նաև գրաֆիկների հրատարակման պահանջները և դրանց մասին բաժանորդներին իրագեկման մեխանիզմները: Ընկերությունները փարեկան երկու անգամ հրատարակում են իրենց սպասարկման փարածքի ջրամատակարարման գրաֆիկները՝ այդ մասին իրագեկելով նաև հեռուստատեսությամբ: Բացի այդ, հրատարակված օրաթերթերն անվճար ուղարկում են փվյալ փարածքի փեդական ինքնակառավարման մարմիններին: Իսկ 2010 թվականի հունվար ամսից նշված ընկերություններն իրենց սպասարկման փարածքի բոլոր սպառողներին յուրաքանչյուր ամիս նախորդ ամսում սպառած ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում կներառեն նաև փվյալ սպառողի հաջորդ ամսվա ջրամատակարարման գրաֆիկի նվազագույն ժամերը:

2010 թվականին հանձնաժողովը կվերանայի նշված երեք ընկերությունների ջրամատակարարման փառության փաստացի մեծությունները, ինչպես նաև կսահմանի այդ ցուցանիշների 2011 թվականի ծրագրային մեծությունները: Բացի այդ, համանման

պահանջներ կառաջադրվեն խմելու ջուր մաքարակարարող մնացած երկու՝ Լոռի և Շիրակ ջրմուղ-կոյուղի ընկերություններին:

5. Սպառողների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ փարվող աշխատանքներ

2010 թվականին հանձնաժողովի թափանցիկ և հրապարակային աշխատանքը միտված կլինի հանրության բոլոր շերտերի իրազեկության աստիճանի բարձրացմանը, յուրաքանչյուր քաղաքացու փեղեկություն ստանալու իրավունքի իրացմանը: Սպառողների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ սերտ համագործակցությունը շարունակելու է մնալ հանձնաժողովի գործունեության առանցքում: Կշարունակվեն նաև պարբերաբար քննարկումները, մոնիթորինգների անցկացումը հասարակական կազմակերպությունների, սպառողների և կարգավորվող ընկերությունների մասնակցությամբ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների սպառողներին հուզող հարցերին, հարցադրումներին և բողոքներին պատշաճ ընթացք փալու նպատակով:

Նանձնաժողովը 2009 թվականի հունվարի 1-ից սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ստացել է 136 գրավոր բողոք, իսկ «Նրափապ հեռախոսով» և քաղաքացիների ընդունելության արդյունքում՝ 355 բողոք և հարցադրում, որոնցում բարձրացված բոլոր խնդիրներին փրվել է համապատասխան ընթացք, կատարվել է 17 սպուգայց:

Արձանագրելով 2009 թվականին էլեկտրոնային բովանդակության համահայկական երրորդ մրցանակաբաշխությունում հանձնաժողովի կայքի առաջին կարգի մրցանակի արժանանալու փաստը, հանձնաժողովը գալիք փարի կշարունակի հարստացնել ինտերնետային կայքը, որի յուրաքանչյուր այցելու կգտնի իրեն անհրաժեշտ փեղեկությունը:

ԶԼՄ-ներով հանրությունը կձանուցվի հանձնաժողովի նիստերի մասին, կմեկնաբանվեն ընդունված որոշումները, լրագրողների համար կկազմակերպվեն ճեպագրույցներ: Նանրության համար հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին հաղորդագրությունները, հանձնաժողովի գործունեությանն առնչվող պաշտոնական փեղեկափոխությունները կհրապարակվեն մամուլում, կափռվեն էլեկտրոնային լրատվամիջոցներով և փոստով: Ինչպես նախորդ փարիներին, 2010-ին նույնպես, փեղեկափոխության փարածումը կընդգրկի հանրապետության ողջ փարածքը: Կշարունակվի հանձնաժողովի արդյունավետ փոխգործակցությունը ԶԼՄ-ների հետ. հանձնաժողովի նախագահը, անդամները, աշխատակազմի մասնագետները հասարակական հնչեղություն ունեցող որոշումների, հարցերի շուրջ էլեկտրոնային լրատվամիջոցներով և փարագիր մամուլով պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի

հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով:

Կշարունակվի մամուլի հրապարակումների ամենօրյա վերլուծությունը: Լրատվամիջոցների հաղորդած տեղեկությունները, ընկերություններից համապատասխան պարզաբանումներ սրանալուց հետո, կօգտագործվեն մատուցվող ծառայությունների որակի մասին հանձնաժողովի նպատակային ուսումնասիրություններում:

2010 թվականի ընթացքում կշարունակվի համագործակցությունը ընկերությունների հանրային կապերի, մամուլի պատասխանատուների հետ՝ մամուլի ասուլիսների մասնակցության, լրատվական զանազան միջոցառումների, տեղեկատվության փոխանակման, համատեղ միջոցառումների ծրագրման և անցկացման ձևաչափերով:

6. Նամագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ

Միջազգային փորձն ուսումնասիրելու և կիրառելու նպատակով հանձնաժողովը կշարունակի ակտիվ համագործակցությունը փարբեր միջազգային կառույցների հետ: Իրենց որակավորումը բարձրացնելու նպատակով հանձնաժողովի մասնագետները կմասնակցեն Նամաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Միջազգային հեռահաղորդակցության ընկերակցության կողմից կկազմակերպվող սեմինարներին և փարաբնույթ միջոցառումներին:

2010 թվականին նախատեսվում է հանձնաժողովի մասնագետների մասնակցությունը էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների փարաձաշրջանային ընկերակցության (ERRA) հերթական հանդիպումներին և նիստերին, համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Կոթոթյամբ զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպվող սեմինարներին:

2010 թվականին հերևողական աշխատանքներ կտարվեն նաև «Էլեկտրակապի եվրոպական կառավարում» և «Կապի միջազգային ինստիտուտ» միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ համագործակցություն հաստատելու ուղղությամբ:

7. Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում

Վերլուծելով 2008 թվականի տարեկան և 2009 թվականի 6 ամիսների ընթացքում արտադրված, հաղորդված և բաշխված էլեկտրական ու ջերմային էներգիայի, ներկրված և բաշխված բնական գազի փաստացի ցուցանիշները, ընկերությունների կողմից ներկայացված նախնական կանխատեսումները, ինչպես նաև հաշվի առնելով կարգավորվող համակարգերի զարգացման միտումները, հանձնաժողովը կազմել է էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի 2009 թվականին ակնկալվող և 2010 թվականի կանխատեսումային հաշվեկշիռները (աղյուսակներ №№ 1, 2, 3):

Ինչպես երևում է № 1 աղյուսակից, 2010 թվականին նախատեսվում է «Նայասպանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ մուտք գործող էլեկտրական էներգիայի ծավալի 2.85% նվազում՝ 2009 թվականին ակնկալվող ծավալի համեմատությամբ:

2010 թվականին էլեկտրական էներգիայի ընդհանուր արտադրության մեջ արտմային էլեկտրակայանի մասնաբաժինը կանխատեսվում է 40.49% (2009 թվականին ակնկալվում է 44.5%), ջերմային էլեկտրակայաններինը՝ 29.65% (2009 թվականին ակնկալվում է 20.6%), հիդրոէլեկտրակայաններինը՝ 29.33% (2009 թվականին ակնկալվում է 34.4%), հողմային էլեկտրակայանինը՝ 0.04% (2009 թվականին ակնկալվում է 0.05%), կոգեներացիոն կայանինը՝ 0.39% (2009 թվականին ակնկալվում է 0.41%) և կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանինը՝ 0.1% (2009 թվականին ակնկալվում է 0.04%):

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ում 2010 թվականին կանխատեսվող էլեկտրական էներգիայի արտադրության անը պայմանավորված է նոր շոգեգազատուրբինային տեղակայանքի շահագործման հանձնմամբ:

Երկրորդ աղյուսակում փրված են բնական գազի 2009 թվականին ակնկալվող և 2010 թվականի կանխատեսվող հաշվեկշիռները: Ըստ կանխատեսման, 2010 թվականին, 2009 թվականի համեմատությամբ, սպառողներին առաքվող բնական գազի ծավալը կաճի շուրջ 7.4%-ով, այդ թվում՝ բնակչությանը մատակարարվող բնական գազի ծավալը՝ շուրջ 1.7%-ով:

Երրորդ աղյուսակում փրված են ջերմամատակարարման և արդյունաբերական կարիքների համար ջերմային էներգիայի 2009-2010 թվականների կանխատեսվող հաշվեկշիռները: «Նաիրիպ գործարան» ՓԲԸ-ի կանխատեսումների համաձայն՝ 2010 թվականին 2009 թվականի համեմատությամբ շուրջ 36.2%-ով կավելանա արդյունաբերական կարիքների համար «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ից առաքվող ջերմային էներգիայի ծավալը:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2009-2010 թթ. ՆԱՇՎԵԿՇԻՈՒՐ

h/h	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2009 թ. սպասվող	2010 թ. կանխատեսվող
1	Էլեկտրաէներգիայի արտադրություն, այդ թվում՝	մլն կՎտժ	5813.4	6137.8
1.1	ՆԱԷԿ	մլն կՎտժ	2587.1	2485
1.2	ՆԷԿ-եր, որից՝	մլն կՎտժ	1999.2	1800
1.2.1	«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	մլն կՎտժ	450	450
1.2.2	«Որոտանի ՆԷԿՆ» ՓԲԸ	մլն կՎտժ	1100	900
1.2.3	«Ձորա ՆԷԿ» ՓԲԸ	մլն կՎտժ	97	80
1.2.4	Մասնավոր փոքր ՆԷԿ-եր	մլն կՎտժ	352.2	370
1.3	«Լոռի-1» հողմային էլեկտրակայան	մլն կՎտժ	2.9	2.8
1.4	«Երևանի Մ. Ներսիսյան անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կառուցվող էլեկտրակայան	մլն կՎտժ	24	24
1.5	«Լուսակերպ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական գանգվածից էլեկտրաէներգիա արտադրող կայան	մլն կՎտժ	2.5	5.9
1.6	ԶԷԿ-եր, որից՝	մլն կՎտժ	1197.7	1820.1
1.6.1	«Նրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՆրազԶԷԿ)» ԲԲԸ	մլն կՎտժ	955.6	880.1
1.6.2	«Երևանի ԶԷԿ» ՓԲԸ	մլն կՎտժ	242.1	940
2	Էլեկտրաէներգիայի ծախսը սեփական կարիքների համար	մլն կՎտժ	362.2	386
2.1	Նույնը՝ %-ով փող 1-ի նկատմամբ	%	6.23%	6.3%
3	Առաքում կայաններից, այդ թվում՝	մլն կՎտժ	5451.2	5752
3.1	Էլեկտրակայաններից (տ.1.2.4+ տ.1.3+ տ.1.4+ տ.1.5), որոնց առաքված էլեկտրաէներգիան մուտք չի գործում բարձր լարման էլեկտրացանցեր	մլն Վտժ	363.4	383.7
4	Ներհոսք	մլն կՎտժ	151	0
5	Ընդամենը մուտք բարձր լարման էլեկտրացանցեր (փող3-փող3.1+ փող4)	մլն կՎտժ	5238.8	5368.1
6	Կորուստները բարձր լարման էլեկտրացանցերում	մլն կՎտժ	72.0	72
6.1	Նույնը՝ %-ով փող 5-ի նկատմամբ	%	1.37%	1.34%
7	Արտահոսք	մլն կՎտժ	301.5	600
8	Ընդամենը մուտք «Նայասարանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (փող3+փող4-փող6-փող7), որից՝	մլն կՎտժ	5228.7	5079.8
8.1	Լեռնային Ղարաբաղի Նանրապետության համար	մլն կՎտժ	148.0	148
8.2	Ներքին շուկայում սպառման համար	մլն կՎտժ	5080.7	4931.8
9	Կորուստները բաշխիչ ցանցերում	մլն կՎտժ	680.0	641
9.1	Նույնը՝ %-ով փող 8.2-ի նկատմամբ	%	13.4%	13%
10	Ներքին սպառում	մլն կՎտժ	4400.7	4290.8

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ 2009-2010 թթ. ՆԱՇՎԵԿՇԻՈՒԸ

h/h	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2009 թ. սպասվող	2010 թ. կանխա- դրվող
1	Բնական գազի ներկրում	մլն ն մ ³	1902	2035.6
2	Տեխնոլոգիական կորուստները գազի համակարգում	մլն ն մ ³	140.5	141
2.1	Նույնը՝ %-ով Կող 1-ի նկատմամբ	%	7.4%	6.93%
3	Գազի ծախսը սեփական կարիքների համար	մլն ն մ ³	11.0	12
3.1	Նույնը՝ %-ով Կող 1-ի նկատմամբ	%	0.6%	0.59%
4	Մղվել է ստորգերնյա պահեստարաններ	մլն ն մ ³	-	2.0
5	Բնական գազի առաքումը սպառողներին որից՝	մլն ն մ ³	1750.5	1880.6
5.1	Ջերմային էլեկտրակայաններ	մլն ն մ ³	400	480
5.2	Արդյունաբերություն	մլն ն մ ³	286	300
5.3	Բյուջեպային կազմակերպություններ	մլն ն մ ³	40	40.5
5.4	Բնակչություն	մլն ն մ ³	590	600
5.5	Կենտրոնացված ջեռուցման համակարգ	մլն ն մ ³	0.1	0.1
5.6	Այլ սպառողներ	մլն ն մ ³	434.4	460

ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2009-2010 թթ. ՆԱՇՎԵԿՇԻՈՒԸ

h/h	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2009թ. սպասվող	2010 թ. կանխա- դրվող
1	Ջերմային էներգիայի արտադրությունը, այդ թվում՝	հազ ԳՋ	921.97	1256.11
1.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	հազ ԳՋ	921.97	1256.11
2	Ջերմային էներգիայի կորուստները, այդ թվում՝	հազ ԳՋ	64.54	87.93
2.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	հազ ԳՋ	64.54	87.93
2.1.1	Նույնը՝ %-ով Կող 1-ի նկատմամբ	%	7.0%	7.0%
3	Ջերմային էներգիայի օգտակար առաքումը, այդ թվում՝	հազ ԳՋ	857.44	1168.18
3.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ից՝ արդյունաբերական կարիքների համար	հազ ԳՋ	857.44	1168.18